Երեւանի մամուլի ակումբի 2005թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ 2005թ. հունվարի 1-ից մինչեւ 2005թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաեւ 2005թ. հունվարի 1-ի 21,188,300.02 դրամ մնացորդը, կազմել է 140,517,148.12 դրամ։

ԵՄԱ անդամների անդամավճարները կազմել են՝ 227,000 դրամ, դրամաշնորհներ՝ Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի օժանդակության հիմնադրամի՝ 48,904,411. 29 դրամ, դրամաշնորհներ՝ Բաց հասարակության ինստիտուտի ԶԼՄ-ների ցանցային ծրագրի՝ 28,506,110.60 դրամ, դրամաշնորհ՝ Բաց հասարակության ինստիտուտի մարդու իրավունքների եւ կառավարման դրամաշնորհային ծրագրի՝ 8,898,929.52 դրամ, դրամաշնորհ՝ Բաց հասարակության ինստիտուտի «Արեւելք-Արեւելք» ծրագրի՝ 8,648,994.75 դրամ, դրամաշնորհ՝ «Եվրասիա» հիմնադրամի Հարավային Կովկասում համագործակցության ծրագրի՝ 10,726,938.84 դրամ, մուտք՝ «Արտիկլ XIX» կազմակերպության ստացած դրամաշնորհից՝ 3,011,309.80 դրամ, դրամաշնորհ՝ Եվրոպայի խորհրդի՝ 3,288,574.50 դրամ, դրամաշնորհ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝ 2,424,072 դրամ։ Տարադրամի փոխարժեքների դրական տարբերությունը կազմել է 4,508,754.80 դրամ եւ 183,751.97 դրամ ստացվել է բանկային տոկոսներից։

Հաշվետու ժամանակահատվածում ծախսվել 118,342,555.50 դրամ, որից.

1. Աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ - 48,210,967.25։
2. Եկամտահարկ - 6,754,678.60։
3. Կենսաթոշակային հիմնադրամ - 8,567,586.80։
4. Գործուղման, վերապատրաստման եւ տրանսպորտային ծախսեր - 13,218,991.31։
5. Կոմունալ ծախսեր - 1,719,454։
6. Սարքավորումներ եւ գրասենյակի կահավորում - 5,365,810։
7. Գրենական, գրասենյակային պիտույքներ, արագամաշ առարկաներ - 1,828,134.51։
8. Կապ եւ պարբերականների բաժանորդագրություն - 4,130,549.50։
9. Տպագրական ծախսեր - 3,348,486։
10. Հեռուստահաղորդումներ, հեռուստակոնֆերանսներ եւ ֆիլմեր - 9,584,335։
11. Սեմինարների, կոնֆերանսների անցկացում - 1,925,790։
12. Վճարումներ տարբեր կազմակերպությունների ծառայությունների դիմաց - 1,443,006։
13. ԵՄԱ 10-ամյակի միջոցառումներ - 613,023.70։
14. Գույքահարկ - 18,000։
15. Բանկի ծառայություններ - 1,176,353.63։
16. Տարադրամի փոխարժեքների բացասական տարբերություն - 10,437,389.16։

Շնորհատու կազմակերպությունների պահանջներին համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը։

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ

վարչության հետ։

Բոլոր եկամուտները եւ ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են Երեւանի մամուլի ակումբի հաշվապահությունում։

2006թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **22,174,592.62** դրամ։

** Սույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել։*